

eduroam - համաշխարհային Wi-Fi ռոուտինգ գիտակրթական հանրության համար



Այսօր կրթությունն ու գիտությունը, ավելի ու ավելի գլոբալ են դառնում պայմանավորված միջազգային համագործակցությամբ, ինչը ցանկացած ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքի բաղադրիչ մասն է կազմում: Գիտնականներն ու ուսանողները շարժունակ են աշխարհով մեկ մեկտեղվող թիմերի հետ: Հետազոտությունն ու կրթությունը այլևս չեն սահմանափակվում լսարանով կամ լաբորատորիայով, թե՛ հետազոտողները և թե՛ ուսանողները ակնկալում են գործել առցանց և աշխատել առանց տարածքային կամ ժամանակային սահմանափակումների: Իսկ ինչպե՞ս են ինստիտուտները և գիտակրթական ցանցերը աջակցում այս չափազանց շարժունակ և պահանջկոտ լսարանին:

Այցելուներին տեղական Wi-Fi ծառայության՝ անվտանգ մուտք ապահովելու անհրաժեշտությունը կարող է մեծ վարչական խնդիրներ առաջացնել: Ռեսուրսները պետք է

բաշխվեն կամ անհատական հիմունքներով ժամանակավոր հաշիվներ տրամադրելու և օժանդակելու ճանապարհով (որոնք կարող են չափազանց ժամանակատար և թանկ լինել խոշոր կրթական հաստատություններում), կամ պետք է հանրային հյուրի հաշիվներ օգտագործվեն: Նույնիսկ եթե դրանք փոփոխվեն ամեն օր, այդ հաշիվները կարող են առաջացնել աուդիտի խնդիրներ, քանի որ մինտույն հաշվի միաժամանակյա օգտագործումը դժվարացնում է ցանցի ցանկացած անպատշաճ օգտագործման վերահսկումը:

Այս խնդրին լուծում տալու համար մշակվել է eduroam-ը, որի նպատակն է գիտակրթական հանրությանը տրամադրել պարզ ու հեշտ գործարկվող Wi-Fi ռոուտինգի ծառայություն: Որտեղ էլ որ լինեք՝ մեկ անձնական հաշիվ: Կարիք չկա օգտագործելու ընդհանուր հյուր-հաշիվներ կամ տրամադրելու անապահով վեբ հասանելիություն: eduroam-ը նախագծված է ամբողջ

աշխարհի գիտակրթական հանրության պահանջները գոհացնելու համար:

101

ԵՐԿԻԲ

ՏԱՐԵԿԱՆ ԱՎԵԼԻ

ՔԱՆ ՄԵԿ ՄԻԼԻԱՐԴ ՄԻԱՅՈՒՄ


ՀԱՐՄԱՐ Է

ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՎՏՈՄԱՏ ԿԵՐՊՈՎ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ ՑԱՆՑԻՆ

ԱՆՎՏԱՆԳ Է

802.1X ԾԱԾԿԱԳՐՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

eduroam-ը ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ



Ի՞նչ արժե այն

Գլոբալ համաձայնագրերի շնորհիվ Eduroam Wi-Fi ռոուտինգ ծառայությունն անվճար է օգտատերերի համար: Այս խնայողությունները կարող են էական լինել ինչպես այցելուների մուտքի կառավարման, այնպես էլ ճամփորդող աշխատակազմի

ռոուտինգ ծախսերի կրճատման համար: eduroam ծառայության ապահովման համար անհրաժեշտ է կիրառել մուտքերի հեռակառավարման RADIUS տեխնոլոգիան: Այն հաստատությունների դեպքում, որտեղ RADIUS տեխնոլոգիան չի

գործարկվում, eduroam հասանելությունը ապահովելու համար ազգային գիտահետազոտական և կրթական ցանցերը (NREN) կարող են օգտվել GEANT-ի կողմից տրամադրվող Managed IdP ծառայությունից:

Որո՞նք են eduroam-ի առավելությունները օգտատերերի, ազգային գիտահետազոտական և կրթական ցանցերի համար

Գիտահետազոտական և կրթական հաստատությունների համար eduroam-ը տրամադրում է մեկ ամբողջական լուծում, որը ներառում է բջջային կապի բոլոր պահանջները, ապահովելով



տեղական ցանցին միացած տեղական օգտվողներ՝ անխափան տեղաշարժում կրթական հաստատությունով, ճամբարով և տարաբաշխված մասնաշենքերով.



տեղական ցանցին միացող այցելուներ՝ վերացնելով անհուսալի հյուր հաշիվների օգտագործման անհրաժեշտությունը.



տեղական օգտվողներ՝ ամբողջ աշխարհով eduroam անդամ այլ ցանցերին միանալու հնարավորություն.

գրավիչ վայր հանդիպումներ և գիտաժողովներ կազմակերպելու համար, քանի որ eduroam ցանցը մասնակիցներին թույլ է տալիս մուտք գործել առանց որևէ մեկի օգնության:

Ազգային գիտահետազոտական և կրթական ցանցերին eduroam-ը առաջարկում է հավելյալ ծառայությունների մեծ փաթեթ: Այն ապահովում է ոչ միայն ազգային, այլև միջազգային Wi-Fi ռոուտինգ ծառայությունների մեկ լուծում: eduroam-ը կայացած տեխնոլոգիա է ցանկացած ծավալի ցանցերի համար:

Անկախ նրանից՝ արդյո՞ք օգտվողները տեղաշարժվում են ճամբարում, սովորում կամ աշխատում են մեկ այլ գիտակրթական հաստատությունում, eduroam-ը ապահովում է անխափան ինտերնետային կապ բոլորի համար: Աշխարհում հասանելի են ավելի քան 10.000 eduroam միացման կետեր 89 տարածքներում՝ բուհերում, գիտահետազոտական հաստատություններում, ակադեմիաներում, բազմաթիվ

դպրոցներում և գիտահետազոտական այլ կենտրոններում: eduroam-ի տարածման արդյունքում ընդլայնվում է գործարկման շրջանակը և, ավելի ու ավելի շատ կետեր են հայտնվում տարբեր վայրերում, ինչպիսիք են գրադարանները, թանգարանները, նույնիսկ հանրային տարածքներում կայարաններում և սրճարաններում:

eduroam-ը բարձր է գնահատվում աշխարհի միլիոնավոր օգտվողների կողմից, eduroam-ի ապահովումը իրական արժեք է հանդիսանում ուսանողական և հետազոտական համայնքի համար: Օրինակ՝ ուսանողական հանրակացարաններում բնակվող ուսանողները eduroam-ի ծառայության շնորհիվ ստանում են անվտանգ, լայնածավալ և հեշտ օգտագործվող Wi-Fi ծառայություն բոլոր սարքավորումների համար:

Ուսանողները, հետազոտողները և աշխատակիցները, որոնք հյուրընկալվում են գիտական կամ կրթական հաստատությունում, Wi-Fi-ին միանալու համար օգտագործում են eduroam-ի իրենց «տուն» հաստատության հավատարմագրերը: Արդյունքում նրանք ստանում են հարմար, արագ և ապահով կապ առանց դիմելու տեղական SS թիմի աջակցությանը: Շնորհիվ այս լուծմանը տեղական SS թիմը կարող է կենտրոնանալ հիմնական ծառայությունների կառավարման վրա: Անվտանգ մուտքագրման համակարգը նշանակում է, որ գաղտնաբառերը միշտ գաղտնի են պահվում: eduroam-ի հետ ուսանողական քաղաքները դառնում են ավելի



eduroam.org



@eduroam



@eduroam.org



Նախագիծը իրականացվում է GÉANT 2020 (FPA) գործընկերության շրջանակային համաձայնագրով, որը ֆինանսավորում է «Չորիզոն 2020» ԵՄ հետազոտության և նորարարության ծրագիրը:

Օգոստոս 2018

